

**ԱՂՐԲԵՋԱՆԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԽԱՆ-ԹԵՋԻՆՍԱԿՈՒ
ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1919 Թ. ՄԱՐՏ-ՕԳՈՍՏՈՍ)**

ՅՈՒ. Վ. ՂՈՒՑԱՆ

ՀՀ-ի և Աղբբեջանի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին 1919 թվականի մարտին: Երևանում աղբբեջանական ներկայացուցչության և մասնավորապես Խան-Թեքինսկու գործունեության վրա լույս են սփռում այն գաղտնի հեռագրերը, որոնք նա և նրան փոխարինած դիվանագետները ուղարկել էին Աղբբեջանի կառավարությանը¹: Հայաստանի արտաքին գործերի նախարարությունն այդ փաստաթղթերին ժամանակին տեղյակ էր և հրապարակման համար հարմար պահի էր սպասում: Դրանք ԱԳ նախարարության կողմից հրապարակվեցին միայն Աղբբեջանում խորհրդային իշխանության հաստատումից հետո, որով և պարզ դարձավ Աղբբեջանի կառավարության և նրա ներկայացուցիչների՝ Հայաստանում իրականացրած հակապետական գործունեությունը²:

Աղբբեջանի դիվանագիտական ներկայացուցչության գործելակերպը լրտեսությունն էր: Լրտեսվում էին գորական ուժերը, գորբերի տեղաշարժերը, ֆինանսները³: Միաժամանակ դիվանագիտական ներկայացուցիչը հուշում էր իր կառավարությանը, թե ինչ ձևով է հնարավոր վնասել Հայաստանի Հանրապետությանը⁴: Հայաստանի մահմեդականությանը դրամական ու զինվորական աջակցություն ցուցաբերելով՝ ապակայունացնում էր երկրի ներքին դրությունը, խռչնդոտում բնականոն կյանքի զարգացմանը:

Խան-Թեքինսկին իր կառավարությունից ցուցումներ էր ստացել ամեն կերպ վնասել Հայաստանի Հանրապետությանը՝ ներքին խռովություններ՝ կազմակերպելով աղբբեջանաբնակ վայրերում Հայաստանը ներսից պայթեցնելու նպատակով: Նա առերես ներկայանում էր որպես հարևան պետությունների միջև բարիդրացիական հարաբերությունների հաստատման կողմնակից, սակայն թշնամական գործունեություն էր ծավալում Հայաստանի ողջ տարածքում:

Գաղտնի գրությունները սկսվեցին այն պահից, երբ Աղբբեջանի դիվանագիտական ներկայացուցիչը ոտք դրեց Հայաստան, և շարունակվեցին շուրջ մեկ տարի: Միջին հաշվով երեք օրը մեկ գաղտնի հեռագիր է ուղարկվել՝ շիաշված առանձին մարդկանց (զինվորական կցորդի, գործակալների) միջոցով ուղարկված զեկուցագրերը:

Խան-Թեքինսկու՝ մարտի 22-ի արտաքին գործերի նախարարին ուղարկած առաջին հեռագրից տեղեկանում ենք մարտի 18-ին Էջմիածին՝ Ամենայն Հայոց կաթողիկոսին նրա այցելության, իսկ մարտի 19-ին կառավարության կողմից ճաշի հրավիրվելու մասին, որի

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, մաս 1, ք. 203-214, Ս. Աստվածատրյան, Աղբբեջանը և Հայաստանը, «Հայրենիք», 1957, թիվ 8, էջ 53-57:

² Տե՛ս ՀԱԱ, գ. 71, ք. 290, ք. 309-320-322, «Գաղտնի փաստաթղթեր (Աղբբեջանի դավադրական գործունեության մի էջ)» (այսուհետև այս փաստաթղթից հղումները տեքստում՝ ԳՓ և էջը), Եր., 1920, Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 310-316, Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Է հատոր, Եր., 1991, էջ 193-204:

³ Տե՛ս ՀԱԱ, գ. 299, մաս 1, ք. 2:

⁴ Տե՛ս Ի. Տերտերյան, Հայկական գոյամարտը, Թեհրան, 1957, էջ 364:

⁵ Տե՛ս Գ. Չալսուշյան, Ի՞նչ էր և ի՞նչ պիտի լիներ մեր ուղին, Վիեննա, 1923, էջ 10:

ընթացքում հայկական կողմը մատնանշել էր երկու հանրապետությունների միջև բարեկամական հարաբերություններ հաստատելու անհրաժեշտությունը: Անդրադառնալով կաթողիկոսին կատարած այցելությանը՝ ղեսպանը տեղեկացնում է, որ մագուրի չգուրքյան պատճառով Էջմիածնի վանքը գրկված էր էլեկտրական լույսից, և որ ինքը խոստացել է մեքենաների համար մագուր տալ: Ուստի խնդրում էր շուտով տակառներով մագուր ուղարկել, նաև օգնություն ցուցաբերել ծանր դրության մեջ գտնվող գաղթականությանը (ԳՓ, էջ 17): Մակայն նույն հեռագրի՝ ծածկագրի փոխված երկրորդ մասում Թեքինսկին խորհուրդ էր տալիս. «Ուղարկեցեք միայն 200 փութ մագուր, ապելին կարող է կառավարությունն օգտագործել... Հայաստանը Թիֆլիսից ստացավ 14 միլիոն բոն, բայց, եթե ֆինանսական տեսակետից դժվարություններ հարուցեք, շուտով ծանր դրության մեջ կրնկնի: Եկամտունների բացակայության պատճառով Հայաստանը չի կարող ինքնուրույն կյանք վարել...» (ԳՓ, էջ 18):

Ինչպես նշվեց, դիվանագիտական ներկայացուցչի գործունեության ուղղություններից մեկը Հայաստանի զինված ուժերի լրտեսումն ու դրանց մասին կառավարությանը տեղեկություններ և տվյալներ հաղորդելն էր: Բաքու՝ նախարարապետին, պատճենը՝ արտաքին գործերի նախարարին ուղարկած երկրորդ գաղտնի հեռագրով Թեքինսկին տվյալներ էր հաղորդում Հայաստանի զինված ուժերի, նրա կառուցվածքի, գնդերի, հետևակի թվի, մարտկոցների մասին: «Հայաստանը ունի վեց հետևակ գունդ, յուրաքանչյուրը բաղկացած էրեք գումարտակից, բացի դրանից, կազմվում է վեց Ղարաբաղի գումարտակ և մեկ Երևանի պահակային գումարտակ. ամբողջ հետևակը չի անցնում 10 հազարից» (ԳՓ, էջ 18-19),- տեղեկացնում էր Թեքինսկին ապրիլի 10-ին ուղարկած հեռագրում: Հայաստանի ուժերի մասին տեղեկությունների հավաքումն իրականացվում էր դիվանագիտական ներկայացուցչի ու ներկայացուցչության զինվորական կցորդի միջոցով, որը տեղեկություններ էր հավաքում ինչպես բանակի թվային կազմի, այլև դրանց տեղակայման վայրերի, անգամ հրետանու պաշտպանվածության աստիճանի մասին. «Ղարատում մոտավոր հաշվով կա 500-700 թնդանոթ՝ ութ դյույմանոցից մինչև դաշտային, որոնց վրա սպաներ ու ծառայողներ չկան» (ԳՓ, էջ 17),- հայտնում էր դիվանագիտական ներկայացուցչիչը հունիսի 12-ին ուղարկած հեռագրում: Հայաստանի զինական ուժի մասին տվյալների մի մասը Թեքինսկին կառավարությանը հասցնում էր Թիֆլիսի՝ իրենց ներկայացուցչության զինվորական կցորդի՝ Մահմեդ բեգ Ալիևի միջոցով: Հանգամանորեն տեղեկացնելով հայոց զորքի մասին՝ Թեքինսկին հուլիսի 16-ին Ալիևին հղած հեռագրում հայտնում էր. «Ներկայումս ուժեղ զորահավաք կա: Կարծում եմ, որ միայն զորահավաքով կարող են լրացնել մատնանշված զնդերի քանակը, որովհետև դասալքություն չատ կա: Խնդրում եմ այս ամենը հաղորդեք զինվորական նախարարին» (ԳՓ, էջ 33): Թիֆլիսի ադրբեջանական ներկայացուցչությունում Թեքինսկու հալոդղած տվյալները ստանալով՝ զինվորական կցորդ Ալիևը երկու օր անց նրան խնդրեց հնարավորության դեպքում պարզել, թե որտեղ են կանգնած զորամասերը և դրա մասին հեռագրել (տես ԳՓ, էջ 33): Պատասխանը չուղացավ, և արդեն հուլիսի 21-ին ուղարկած հեռագիրը, ուր մանրամասն տրված էին հայկական զորամասերի տեղակայման վայրերը, պահանջված տվյալներով ուղարկվեց զինվորական կցորդի անունով (տես ԳՓ, էջ 34): «Ձորավար Շելովմիկովի գաղտնի հրամանները՝ ուղղված զնդերի հրամանատարներից, բոլորած են և ուղարկված Շարուր-Նախիջևանի մահմեդականներին ի տեղեկություն, այդ մասին հայերը հավանորեն չգիտեն» (ԳՓ, էջ 34),-ավարտում է հեռագիրը Թեքինսկին:

Ձինական տվյալների մի մասը վերաբերում էր Ձանգեզուրում գտնվող հայկական զորամասերին: «Ձանգեզուրում կան հայկական զորամասեր, բայց նրանց թիվը հայտնի չէ» (ԳՓ, էջ 34), - տեղեկացնում էր Թեքինսկին հուլիսի 19-ին ուղարկած հեռագրում, իսկ հուլիսի 21-ի հեռագրում՝ շտապ ուղարկված արտաքին գործերի նախարարին, ներկայացուցչիչը հայտնում էր. «Ձանգեզուրում կան Հայաստանի զորամասեր, որոնք Կիչինի անցքով շարունակում են կապ պահպանել Հայաստանի իշխանությունների հետ» (ԳՓ, էջ 35):

Թեքինսկին ոչ միայն լրտեսում էր Հայաստանի զինական ուժերին, այլև փորձում էր

հասնել նրա դիմադրական ուժի թուլացմանը: Այսպես, դեռ 1919 թ. մայիսի 10-ին, «քոլչևիկյան վտանգը» պատրվակ ունենալով, նա կառավարությանը խորհուրդ էր տալիս. «Բոլշևիկների կողմից Բաքվին վտանգ սպառնալը պատճառ թերեցեք և խնդրեցեք անգլիացիներին, ուր Ղարսի թնդանոթները փոխադրեն Բաքու»: Դիվանագիտական ներկայացուցչի տվյալները վերաբերում էին ոչ միայն տեղակայված ուժերի դասավորվածությանը, այլև հայկական զորքերի տեղաշարժերին ու նրանց ուղղություններին: Ուշագրավ են Շարուր-Նախիջևանի ուղղությամբ գործող հայկական զորքերի մասին տեղեկությունները, որ ներկայացուցիչը ստանում էր զինվորական կցորդի և բազմաթիվ զործակալների միջոցով: Տեղեկացված լինելով գործերի ընդհանուր վիճակի մասին՝ Նախիջևանի վրա հայկական իշխանության հաստատումը կանխելու նպատակով Թեքինսկին կառավարությանը խորհուրդ էր տալիս զորքերը մոտեցնել Հայաստանի սահմաններին, որոնց երևալը, ըստ նրա, հայերի մեջ խուճապ կառաջացներ, կուժեղացներ դասալքությունն ու կբարձրացներ մահմեդականների ոգին: «Եթե ուզում եք օգտվել յուպլից, ձեռք առեք շտապ և վճռական միջոցներ» (ԳՓ, էջ 36),- հուլիսի 21-ին ԱԳ նախարարին գրում էր Թեքինսկին՝ խնդրելով տեղեկացնել կառավարության մտադրությունների մասին: Մի քանի օր անց՝ օգոստոսի 3-ին, նախարարապետին հղած հեռագրում Խան-Թեքինսկին անհրաժեշտ էր համարում, որ Աղրեջանը երկու շաբաթվա ընթացքում մաքրի հաշիվները Չանգեզուրի հետ ու հետո զորքերն առաջացնի մինչև Ղամարլու՝ գտնելով, որ պահմ ամենահարմարն է, քանի որ Հայաստանի կոմիսար գնդապետ Հասկելի ժամանումից հետո ուշ կլինի: Առաջարկում էր դա իրագործել առանց պատերազմ հայտարարելու (ԳՓ, էջ 40): Հայկական զորքերի տեղաշարժերի մասին էր նաև Խան-Թեքինսկու՝ որպես Հայաստանում Աղրեջանի դիվանագիտական ներկայացուցչի ուղարկված վերջին գաղտնի հեռագիրը: «Հայաստանը հրետանի և ռումբեր է ուղարկում դեպի Դիլիջան, Նոր Բայազետ և Բասարգեշար: Այսօր Երևանից յոթ բեռնատար ավտոմոբիլներով ռումբեր ուղարկվեցին Նոր Բայազետի խճուղով: Ենթադրում են, որ Հայաստանը պատրաստություններ է տեսնում մահմեդականների դեմ» (ԳՓ, էջ 41),- հայտնում էր ներկայացուցչիչը օգոստոսի 4-ին:

Հայաստանից Աղրեջանի ունեցած տարածքային պահանջները չէին սահմանափակվում միայն Ղարաբաղով, Չանգեզուրով ու Շարուր-Նախիջևանով: Աղրեջանը Հայաստանից պահանջում էր նաև Վեդիքասարի ու Չանգիքասարի շրջանները, Սուրճալուի գավառը, Բասարգեշարի շրջանը: Դա էր պատճառը, որ այդ տարածքների վրա հայկական իշխանության հաստատումը սկիզբներով էր ընդունվում Աղրեջանի ու նրա դիվանագիտական ներկայացուցչի կողմից: Այսպես, երբ հայկական զորամասերը շարժվում էին Գեոզլայի շրջան (Բասարգեշար), անմիջապես հետևեց նախարարապետ Խան-Խոյսկու հրահանգը դիվանագիտական ներկայացուցչին. «Բողոքեցեք Աղրեջանի տեքիստորիան - Գեոզլայի շրջանը զորքեր ուղարկելու դեմ» (ԳՓ, էջ 23):

Կարսը թուրքերին չանցնելու դեպքում Աղրեջանը հավակնում էր նաև վերջինիս մինչև Բաքուն: Երբ 1919 թվականի գարնանը Կարսը միացվեց Հայաստանի Հանրապետությանը, Աղրեջանը հրաժարվեց այդ իրադրությունը ճանաչելուց և իր դիվանագիտական ներկայացուցչին երաժարվեց անհապաղ կապ հաստատել Կարսի կառավարության⁶ հետ, նրան ցույց տալ ամեն տեսակ աջակցություն, պարզել, թե ինչ կարիքներ ունի, և հեռագրել, «արպեսզի կառավարությունը ձեռք առնի անհրաժեշտ միջոցները» (ԳՓ, էջ 23): Այդ կերպ Աղրեջանը հաշվի չէր առնում նաև անգլիացիներին, որոնց անմիջական գիտությունը ու համաձայնությամբ էր Կարսում հաստատվել հայկական իշխանությունը:

⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 299, մաս 1, թ. 40, «Գաղտնի փաստաթղթեր», էջ 25:

⁷ Տես Թուրքեն, նշվ. աշխ., էջ 183:

⁸ Մինչև Կարսում հայկական իշխանության հաստատումը այն կառավարվում էր տեղական բոլորական կառավարության «շուբանի» միջոցով: Վերջինս դրան էր ստանում Աղրեջանից, որը Թուրքիայի հետ միասին ուղղություն էր տալիս նրա գործունեությանը:

Այլ. Խատիսյանի վկայությամբ՝ Աղրբեջանի ներկայացուցիչ Խան-Թեքինսկին իր պաշտոնական ստորին ծառայողների միջոցով Աղրբեջանի դյուշի հովանու ներքո ընթացող առանց շրջան (Չանգիբասար) էր ուղարկել 200.000 ռուբլի: Ծառայողները ճանապարհը կորցրել էին և ընկել կառավարական պահակախմբի ձեռքը: Հարցաքննության ժամանակ նրանք տվել էին կասկածելի ու խառնաշփոթ ցուցմունքներ և վերջում խոստովանել, որ 200.000 ռուբլին տանում էին Չանգիբասարի շրջանի ապստամբած գյուղացիներին բաժանելու համար⁹: Հարցաքննության ժամանակ հաստատվում է նաև Աղրբեջանի հատուկ ստրիանդակի միջոցով Շարուրի ապստամբ շրջանի գյուղացիներին տրված 5 միլիոն ռուբլու փաստը¹⁰: Գաղտնի հեռագրերը հետաքրքրական տեղեկություններ են պարունակում նաև Բեռք-Վեդիի շարժումների մասին: Այդ տեղեկություններից ակնհայտ է ապստամբ Բեռք-Վեդիին Աղրբեջանի ցուցաբերած օգնությունը: Բեռք-Վեդին Հայաստանի դեմ գործող թաթարական հիմնական որջերից մեկն էր, որի ուժեղացման, զինման ու ֆինանսավորման համար Աղրբեջանը միջոցներ չէր խնայում: Հուլիսի 14-ին ուղարկված հեռագրում տեղեկացնելով Բեռք-Վեդիի դեմ ՀՀ նախապատրաստությունների մասին՝ Թեքինսկին համոզմունք էր հայտնում, որ մուսուլմաններին կարող է ազատել Աղրբեջանի զինված միջամտությունը: Միաժամանակ տեղեկացնում էր օգնության խնդրանքով իրեն դիմած մահմեդականներին տված պատասխանի մասին, որ «առայժմ Աղրբեջանը չի կարող օգնել գործով, բայց մահմեդականների բոլոր ծախսերն ու վնասները անմիջապես կվերադարձվեն Աղրբեջանի կողմից» (ԳՓ, էջ 32): Շարուր-Նախիջևան-Օրդուբադում և Կարսի շրջանում սպասվող մեծ դեպքերի կապակցությամբ հուլիսի 14-ին ուղարկված հեռագրում պահանջում էր՝ առանց մի օր կորցնելու ուղարկել խոշոր գումար «զինվորական կազմակերպությունների համար» (ԳՓ, էջ 32): Հեռագիրը ստանալով՝ Աղրբեջանի ԱԳ նախարար Ջաֆարովը համձնարարեց հնարավորության դեպքում պաշտոնական ներկայացուցիչ ուղարկել Բեռք-Վեդի, հակառակ դեպքում նշանակել գաղտնի գործակալ (ԳՓ, էջ 33-34): Բեռք-Վեդիի հարցի լուծումը տեսնելով Հայաստանին պատերազմ հայտարարելու մեջ՝ Թեքինսկին օգոստոսի 1-ին ԱԳ նախարարին գրում էր. «Եթե մենք ուզում ենք հանգստացնել կատաղած հայերին և փրկել բազմաթիվ մահմեդականների կյանքն ու ինչքը, ապա պետք է անհապաղ պատերազմ հայտարարենք» (ԳՓ, էջ 39): Իրազեկելով Բեռք-Վեդիի, Շարուրի և Նախիջևանի շրջաններում տեղի ունեցող կոլիվերի ու հայկական զնդերի նահանջի մասին՝ Թեքինսկին հարցնում էր իր անելիքների մասին, իսկ վերջում հայտնում, որ մահմեդականները դեռ չեն ցանկանում Երևանը գրավել (ԳՓ, էջ 39):

Հայաստանում Աղրբեջանի դիվանագիտական ներկայացուցչության գործունեության գլխավոր ասպարեզներից մեկն էլ Շարուր-Նախիջևանն էր: Այն իր կազմում ունենալու նպատակով Աղրբեջանը համակարգված ձևով Շարուր-Նախիջևանում ապստամբություն ու դավադրություն էր կազմակերպում Հայաստանի կառավարության ու նրա զորքերի դեմ: Թեքինսկու ու նրա հաջորդների կառավարությանն ուղարկված ու նրանից ստացած գաղտնի հեռագրերի գերակշռող մասը վերաբերում էր Շարուր-Նախիջևանին, և դա պատահական չէր: Խան-Թեքինսկին պարբերաբար կառավարությանը տեղյակ էր պահում Նախիջևանի ու նրա շուրջ ծավալվող դեպքերի ու Հայաստանի Հանրապետության քայլերի մասին: Մինչ Նախիջևանում հայկական իշխանության հաստատումը Աղրբեջանը իր ներկայացուցչի միջոցով առատորեն փող էր մատակարարում տեղի թուրքերին: Մակայն երբ Նախիջևանը համձնվեց Հայաստանին, արդեն որոշ դժվարություններ առաջացան: Այսպես, երբ 1919 թ. ապրիլի 30-ին Երևան ժամանած Մակինսկուն (Գանիզադե) գեներալ Թոմսոնը արգելեց անցնել Հայաստանի կառավարության վարչության տակ գտնվող Նախիջևանի շրջանը, մտահոգված կատարվածով՝ Թեքինսկին մայիսի 1-ին հեռագրեց վարչապետին, թե ինչպես գործադրի Նախիջևանին հատկացված գումարները¹¹:

⁹ Տե՛ս Այլ. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 205:

¹⁰ Տե՛ս նույն տեղը:

¹¹ Տե՛ս «Նախիջևան-Շարուր 1918-1921թթ. (փաստաթղթեր և նյութերի ժողովածու)», Եր., 1993, էջ 139:

Անհանգստացած Նախիջևանի՝ Հայաստանին անցումով՝ Թեքինսկին ապրիլի 29-ին ԱԳ նախարարին հարցնում էր. «Եթե Նախիջևանը դիմադրություն ցույց տա հայկական զորքերին, ապա կառավարությունը ի՞նչ օգնություն ցույց կտա և կուղարկի՞՞ արդյոք զորքեր, թեև կով կամավորների անվան տակ» (ԳՓ, էջ 20): Նախիջևան գործառնելու և կամավորներ ուղարկելու մասին Թեքինսկու խնդրանքին ԱԳ նախարարին փոխարինող Ջիաթխանովը մայիսի 5-ին պատասխանեց, որ ներկա պահին դրա մասին խոսք չի կարող լինել, և հանձնարարեց եռանդուն կերպով բողոքել Նախիջևանը գրավելու նպատակով ձեռնարկված ամեն տեսակ գործողությունների և «Աղբբեջանի ինքնիշխան իրավունքների նսեմացման դեմ»¹²: Կապված գեներալ Միլնի և Թոմսոնի՝ Թիֆլիս վերադառնալու հետ՝ Թեքինսկին մայիսի 1-ին վարչապետին շտապ ուղարկված հեռագրում խնդրում էր նրանց հետ բանակցել Նախիջևանի խնդրի շուրջ և ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ (ԳՓ, էջ 21): Երբ հայկական ուժերն անցան Նախիջևան, հայկական իշխանության հաստատումը չեզոքացնելու նպատակով Թեքինսկին մայիսի 5-ին կառավարությանն ուղարկված հեռագրում խորհուրդ տվեց անհապաղ արդբեջանական զնդերը կենտրոնացնել հայկական սահմանների վրա և այդ կերպ ճնշում գործադրել Հայաստանի վրա: Տեղեկացրեց նաև Նախիջևանի բնակչության՝ դիմադրությանը պատրաստ լինելու մասին՝ վերջում չմոռանալով հայտնել, որ Դիլիջանում կանգնած է միայն չորրորդ գունդը, այն էլ՝ թերի կազմով¹³: Նախիջևանի ապստամբների ու Աղբբեջանի կառավարության կապող օդակը դիվանագիտական ներկայացուցիչն էր, որի մասին է վկայում Թեքինսկու 1919 թ. մայիսի 4-ին ուղարկված հեռագիրը. «Նախիջևանցիները ինձ հարցնում են՝ ինչպես վարվել և, արդյոք, Աղբբեջանը օգնության կգա՞, եթե նրանք հայերին դիմադրություն ցույց տան» (ԳՓ, էջ 22): Նախիջևանում հայկական վարչակազմի հաստատումով վերաբերմունքը դեպի Հայաստանի իշխանությունը չփոխվեց: Տեղի թրքությունը, ոչ առանց դիվանագիտական ներկայացուցչի գործում մասնակցության, հրաժարվեց այն ընդունելուց: Նախիջևանում հայկական վարչության նշանակման մասին ԱԳ նախարարին տեղեկացնելով՝ Թեքինսկին մայիսի 9-ին ուղարկված հեռագրով շտապեց հայտնել, որ ձեռք առնված միջոցների շնորհիվ հայերի ավանտյուրան հաջողություն չի ունեցել (ԳՓ, էջ 24): Թեքինսկին մտահոգ էր ինչպես տեղի մահմեդականների դրությամբ, այնպես էլ Աղբբեջանի կողմից Նախիջևանի շուրջ տարվող դիվանագիտական աշխատանքներով, որի հաջողությունը տվյալ շրջանում նա կապում էր Թիֆլիսում դաշնակից հրամանատարության շրջանում ակտիվ գործունեություն ծավալելու և նրանց հետ միշտ համաձայնության մեջ լինելու հետ, հակառակ դեպքում, համոզված էր, որ աղբբեջանական դիվանագիտությունը տանուլ կտա (ԳՓ, էջ 25):

Տեղյակ լինելով Դեմիկլինի նկատմամբ հայկական կողմի բարյացակամ վերաբերմունքին՝ Թեքինսկին Կամավորական բանակի հետ հարաբերությունների լարման ու իրենց նկատմամբ հայերի թշնամական պահվածքը կանխելու նպատակով անհրաժեշտ էր համարում Հայաստանի համար Շարուր-Նախիջևանում վտանգ ստեղծելը: Գործը կազմակերպելու համար պահանջում էր անհապաղ դրան բաց թողնել: Նրա ջանքերով Շարուրը, Նախիջևանը և Օրդուբադը միացվեցին մեկ ազգային խորհրդի մեջ: Վերջինս մշտական կապի մեջ էր Թեքինսկու հետ:

Շարուր-Նախիջևանի հետ կապ հաստատելու նպատակով Թեքինսկու ձեռնարկված միջոցները հավանության այժմանացան ԱԳ նախարարության կողմից, որը համաձայնեց միջոցներ տալ «զինվորական կազմակերպությունների համար» (ԳՓ, էջ 27): «Դրանք հրամանատարներին բաց կթողնեմ մաս-մաս, բացի այդ, վերահսկիչներ կնշանակեմ: Վաղը դուրս է գալիս զինվորական կցորդը, լսեցեք նրա զեկուցումը և միասին քննեցեք: Այսօր սուրհանդակ ուղարկեցի Նախիջևան» (ԳՓ, էջ 28),- նշված էր Թեքինսկու՝ 1919 թ. հունիսի 11-ի ԱԳ նախարարին ուղարկված հեռագրում: Հայկական իշխանության դեմ

¹² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 299, մաս 1, ք. 32, «Գաղտնի փաստաթղթեր», էջ 22:

¹³ Տե՛ս նույն տեղը, ք. 30, էջ 21-22:

Թեքինսկու ծրագրերը ձախողվեցին, երբ Նախիջևանի, Շարուրի, Վեդիքասարի և Շահ-թախտի շրջանները գրավվեցին հայկական զորքերի կողմից, և հաստատվեց հայկական վարչությունը: Մահմեդականների անհաջողության պատճառը Թեքինսկին համարեց ժամանակին նյութական օժանդակություն չհասցնելը և հունիսի 22-ին կառավարությանն ուղարկած հեռագրում խնդրեց նոր հրահանգ Շարուր-Նախիջևանի զինվորական կազմակերպությունների մասին. «Թվում է, որ այժմ Աղրբեջանը Հայաստանից բացի ուրիշ թշնամի չունի, ուստի անհրաժեշտ է Հայաստանի վրա առանձին ուշադրություն դարձնել» (ԳՓ, էջ 31),- եզրակացնում էր Թեքինսկին: Գործի օգուտը նկատի ունենալով՝ նա կառավարությունից պահանջում էր չսահմանափակել իր ծախսերը: «Եթե իմ ծախսերը մեծ եք համարում, խնդրում եմ ինձ ետ կանչեք և փոխարինեք ուրիշով» (ԳՓ, էջ 25),- մայիսի 12-ին արտաքին գործերի նախարարին էր գրում դիվանագիտական ներկայացուցիչը: Աղրբեջանը, լսելով իր ներկայացուցչին, նրա տրամադրության տակ դրեց մեծաքանակ դրամական միջոցներ, որոնք էլ օգտագործվեցին Շարուր-Նախիջևանի, Վեդիքասարի, Չանգիքասարի, Էջմիածնի, Ջողի, Չլդրի և Հայաստանի մյուս քաղաքային շրջաններում հակապետական շարժումներ կազմակերպելու նպատակով: Այդ շարժումների անմիջական ղեկավարությունն ու ֆինանսավորումը իրականացվում էր Հայաստանում Աղրբեջանի դիվանագիտական ներկայացուցչի միջոցով, որի զինվորական կցորդն էլ Շարուր-Նախիջևանի շարժման ղեկավարն էր¹⁴: ՀՀ դեմ ձեռնարկվող քայլերի վերաբերյալ հրահանգները ներկայացուցչությունը ստանում էր անմիջականորեն Աղրբեջանի կառավարությունից, որի կարգադրությամբ էլ ապաստմբ գյուղեր էին ուղարկվում գաղտնի գործակալներ¹⁵: Թեքինսկու պարտականությունների մեջ էր Հայաստանի քաղաքական դրության ու ներկայացուցչության գործերի մասին պարբերաբար տեղեկատվություն տրամադրելը: «Շտապ, պարբերաբար և մանրամասն հաղորդեցեք գործերի քաղաքական դրության մասին» (ԳՓ, էջ 38),- Թեքինսկուն էր հեռագրում ԱԳ նախարարի օգնական Ջիաթխանովը: Մեկ այլ հեռագրում ԱԳ նախարար Ջաֆարովը խնդրում էր շտապ հաղորդել, թե ինչ դրության մեջ են Հայաստանի գործերը (ԳՓ, էջ 40): Իր հերթին դիվանագիտական ներկայացուցիչը կառավարությունից ու ԱԳ նախարարից խնդրում էր իրեն տեղյակ պահել քաղաքական անցուղարձին, հատկապես Հայաստանին վերաբերող խնդիրներին (ԳՓ, էջ 35): Չսահմանափակվելով միայն Հայաստանի մասին հաղորդագրություններ տրամադրելով Խան-Թեքինսկին կառավարությանը հուշում էր, թե ինչպես կարելի է ազդել դաշնակիցների, մասնավորապես անգլիացիների վրա, որպեսզի վերջիններս հրաժարվեն այս կամ այն երկրամասին տիրելու գործում Հայաստանին օգնելուց: Այսպես, երբ 1919 թվականի գարնանը անգլիացիները պատրաստվում էին Հայաստանին հանձնել Կարսն ու Շարուր-Նախիջևանը, Թեքինսկին ապրիլի 16-ին շտապեց ԱԳ նախարարին հեռագրով խորհուրդ տալ, որ վերջինս կառավարության անունից սպառնա անգլիացիներին. «Անհրաժեշտ է բողոքել Հնդկաստանի, Թուրքեստանի, Աֆղանստանի, Մալայան կղզիների և Կովկասի ողջ մահմեդականների, նույնպես և Հաշտության Վեհաժողովի առաջ անգլիացիների այն ցանկության դեմ, որով նրանք մի քանի միլիոն մահմեդականներին ենթարկում են թվով կես միլիոն հայերին» (ԳՓ, էջ 19):

Հայաստանի ու հայ ժողովրդի նկատմամբ Աղրբեջանի քաղաքականության մշակման գործում նույնպես մեծ էր դիվանագիտական ներկայացուցչի դերը: Նրա հաղորդագրությունները ոչ միայն տեղեկություններ էին, այլ հայ ժողովրդին վնասելու խորհուրդներ ու առաջարկություններ: «Շտապ միջոցներ ձեռք առեք՝ արգելելու հայերի ելքը, որոնք ցանկանում են փոխադրվել Հայաստան: Կզամ և կբացատրեն»¹⁶, - 1919 թ. հուլիսի 30-ին գրում էր դիվանագիտական ներկայացուցիչը: Աղրբեջանի կառավարության ու նրա ներկայացուցչի նպատակներից մեկն էլ Հայաստանը տնտեսապես թուլացնելն էր: Նավթն

¹⁴ Տե՛ս Ի. Տերտոբյան, նշվ. աշխ., էջ 366:

¹⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 299, մաս 1, թ. 5-6:

¹⁶ Նույն տեղում, էջ 39:

ունենալով որպէս առավելություն՝ Աղբրեջանը այն որպէս զենք էր օգտագործում՝ Հայաստանի վրա ազդելու: Նավթից ու նավթամթերքներից էր ամբողջովին կախված երկաթուղու աշխատանքը, որով և իրականացվում էր ապրանքների ու գորքի տեղափոխությունը: Գրանց բացակայության դեպքում երկաթուղու աշխատանքը կաթվածահար էր լինում¹⁷: Ելնելով դրանից՝ դիվանագիտական ներկայացուցիչը կառավարությանը ցուցումներ էր տալիս, որպէսզի Հայաստանին նավթամթերքների տրամադրման ժամանակ լինի զգույշ և ոչ առատածեղ: «Որևիցե պատճառ բռնելով՝ հետաձգեք Հայաստանի երկաթուղիների համար մագուր ուղարկելը, որովհետև Նախիջևանի շրջանում դեպքեր են սպասվում» (ԳՓ, էջ 26), - ԱԳ նախարարին խորհուրդ էր տալիս Թեքինսկին հունիսի 4-ի հետագրում:

Նավթային գործոնը Աղբրեջանի կողմից օգտագործվում էր նաև Հայաստանի վրա ճնշում գործադրելու ու նրանից զիջումներ ստանալու նպատակով: Այսպէս, նախարարապետին, պատճենը՝ ԱԳ նախարարին հունիսի 11-ի շտապ հեռագրում Թեքինսկին կառավարությանը ցուցում էր տալիս. «Մինչև որ Հայաստանը մուսուլման գյուղացիներին չտեղավորի իրենց գյուղերում և չվերադարձնի նրանց հողերը, որ կապալով են տրված, ոչ մի ֆունտ նավթ և մագուր բաց չթողնեք» (ԳՓ, էջ 29): Ըստ Ռուբեն Տեր-Մինասյանի՝ Աղբրեջանի կողմից Հայաստանում իրականացվող քայքայիչ գործունեության վերաբերյալ ՀՀ կառավարության 1919 թվականի դիրքորոշումը հետևյալն էր. «Չդիպչելով Աղբրեջանի գործակալներին, իսլամ զավառներում (Չանգիրասար, Վեդի, Բասարգեշար, Չոդ, Շաբուր, Նախիջևան և այլն) նրա նախահարձակությունը չիրահրել»¹⁸: Նման զգուշավոր քաղաքականությունը քացատրվում էր դեռևս անիրաժեշտ միջոցներ չունենալու հանգամանքով:

Աղբրեջանի ներկայացուցչությունը կոչված էր պաշտպանելու Հայաստանում ապրող մուսուլմանների իրավունքները: Նրա միջոցով էր իրականացվում Երևանի ու հանրապետության տարածքում գործող մուսուլմանական ազգային խորհուրդների կապը: Նա էր կազմակերպում մուսուլման փախստականների օգնությունը: Ներկայացուցչի վերահսկողությամբ էր տեղի ունենում Հայաստանի մահմեդականների հասցեով Աղբրեջանի կառավարության ուղարկված միջոցների բաշխումը: Խան-Թեքինսկին ՀՀ իշխանությունների հետ տարաբնույթ բանակցություններ էր վարում երկու հանրապետությունների միջև սահմանային, գաղթականական, դատաիրավական, տնտեսական, արտաքին քաղաքական, կոնֆերանսների հրավիրման և այլնի շուրջ: Հայատյաց գործիչ լինելով՝ Թեքինսկին իր գործունեության ողջ ընթացքում հավատարիմ մնաց Հայաստանին վնասելու գործելակերպին: Տեղի մահմեդականությանը ՀՀ նկատմամբ բարեկամաբար տրամադրելու փոխարեն ամեն կերպ նրանց հրահրեց ու ապստամբության կոչեց:

Հայաստանի կառավարությունը, քաջատեղյակ Թեքինսկու գործելակերպին ու հայտնի պետականության նկատմամբ նրա ունեցած թշնամական վերաբերմունքին, նրա դեմ ոչինչ չէր ձեռնարկում, մինչև որ շատացավ Կովկասում դաշնակիցների բարձր հրամանատարության ներկայացուցիչների աջակցությունը: Թեքինսկու՝ Հայաստանից վտարելու գործին միջամտեց անգլիական հրամանատարությունը, որի հրամանով էլ նա հեռացվեց Երևանից¹⁹: Ճիշտ է է. Չոհրաբյանի ենթադրությունն այն մասին, որ առանց դաշնակից տերությունների ներկայացուցիչների համաձայնության, Թեքինսկուն վտարելու հարցը հնարավոր չէր լուծել²⁰: «Անգլիացիների հրամանի համաձայն Թեքինսկին ընդմիշտ մեկնեց Երևանից»²¹, - Աղբրեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանին շտապեց տեղեկացնել ՀՀ ԱԳ նախարարը: Ի դեպ, Թեքինսկու՝ մայիսի 12-ի թիվ 17 հեռագրից տեղեկանում ենք, որ նրա և Խան-Խոյսկու միջև գոյություն է ունեցել

¹⁷ Տե՛ս «Աշակ», Թիֆլիս, 1919, հունվարի 31:

¹⁸ Ռուբեն, նշվ. աշխ., էջ 246:

¹⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 198, ք. 236, «Աշխատավոր», 1919, օգոստոսի 26:

²⁰ Տե՛ս է. Չոհրաբյան, Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի դաշնակիցները (1918 թ. դեկտ. - 1920 թ. ապրիլ), Եր., 2002, էջ 181:

²¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 198, ք. 236:

պայմանավորվածություն, ըստ որի նա Երևանում մեկ ամսից ավելի չպիտի մնար²²: Հետևաբար, Հայաստան գալու մայատակը եղել էր ՀՀ դեմ քայքայիչ գործունեությունը տեղում կազմակերպելն ու հեռանալը: Այդ դեպքում անիմաստ էր մեկ ամսով ներկայացուցիչ ուղարկելը, նկատի ունենալով, որ դեռևս 1918 թվականի նոյեմբերից Ադրբեջանը ամեն ինչ ամուսն էր՝ նրան Հայաստանում դիվանագիտական ներկայացուցիչ նշանակելու համար: Չի բացառվում, որ նրա գոյծունեությունը չբացահայտվելու դեպքում նա կշարունակեր մնալ Հայաստանում: Է. Ջոհրաբյանը շատ հնարավոր է համարում, որ «Հայաստանի կառավարությունը երկար ժամանակ հանդուրժում էր Թեքինսկուն հենց նրա համար, որ կառողանում էր գաղտնագրերն էլ նրա հեռագրերը»²³:

Տեղին է հիշատակել, որ Ադրբեջանին հայտնի էր, որ իրենց կողավորված հեռագրերի մի մասը հայկական իշխանությունների կողմից չէին ուղարկվում, բայց չէին էլ կասկածում, որ դրանք կարդացվում են: Այդ առթիվ Ադրբեջանի արտգործնախարարը Բաքվում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանին ուղարկած հայտագրում նշում էր. «Մեր ունեցած տեղեկությունների համաձայն հայկական իշխանությունների կողմից վերցված են ավելի քան 20 կողավորված հեռագրեր, որոնք պատկանում են Երևանի մեր ներկայացուցչությանը, իսկ մի մասն էլ ուղարկված են Ադրբեջանի ԱԳՆ կողմից դիվանագիտական ներկայացուցչի անունով»²⁴: Առաջարկում էր, որ այդպիսի գործելակերպին վերջ տալ, հակառակ դեպքում սպառնում էր ձեռնարկել համապատասխան քայլեր:

Արժե նշել մի միջադեպի մասին. «Վրաստան» թերթի թիվ 135 և «Ադրբեջան» թերթի 1919 թվականի հունիսի 26-ի համարներում, տալով կողավորված հեռագրի նյութը, աղըրբեջանցիները անվտուրությամբ տպել էին նաև կողի համարը՝ 1720: Այս միջադեպի առթիվ Թեքինսկին 1919 թվականի հուլիսի 2-ին շտապ հեռագրեց իր արտգործնախարարին, ուր ասվում էր. «Այդ անվտուրության պատճառով հայերը կայող են գտնել իմ կողի բանալին և կարողալ բոլոր կողավորված հեռագրերը»²⁵: Ուստի խնդրում էր այլևս ոչ մի հեռագիր չիրապարակել և ուղարկել նոր կողի համարը:

Թեքինսկու գործունեության զնահատականի ու նրան *persona non grata* հայտարարելու վերաբերյալ Ադրբեջանի կառավարությանը ուղարկած նոտայում Ալ. Խատիսյանը նշում էր, որ Թեքինսկու գործունեությունը ոչ միայն չի նպաստել Հայաստանի և Ադրբեջանի միջև բարեկամական կապերի ամրապնդմանը, այլև հակառակը՝ «հեշտությամբ կարող է քայքայել այս ծանր օրերում և այն բարի դրացիական հարաբերությունները, որոնք գոյություն ունեն երկու հանրապետությունների միջև և որոնց ամրապնդումը միշտ եղել և մնում է Հայաստանի կառավարության ամենաջերմ ցանկությունը»²⁶: Խան-Թեքինսկու՝ Հայաստանից հեռացման իրական պատճառը թաքցնելու նպատակով ադրբեջանական կողմը այն վերագրեց դեսպանի հիվանդությանը²⁷:

Մինչդեռ Երևանի դիվանագիտական ներկայացուցչությունը մտահոգ էր իր ներկայացուցչի հեռացումով: «Մահմեդականները շատ են հետաքրքրվում ու անհանգստանում և անհամբեր սպասում են Չեր վերադարձին»²⁸, - Բաքու Խան-Թեքինսկուն էր հեռագրում ներկայացուցչության քարտուղար Միրբաբաևը: Միաժամանակ տեղեկացնում էր. «Հայերը լուրեր են տարածել, որ Խան-Թեքինսկին ձերբակալվել է հայկական կառավարության պահանջով», և որ Խատիսյանը Մակինսկուն ասել էր, թե Թեքինսկին իրեն չափից դուրս շատ բան էր թույլ տալիս»²⁹: Պատասխան հեռագրում Խան-Թեքինսկին հայտնեց.

²² Տե՛ս նույն տեղը, գ. 299, մաս 1, թ. 4, «Գաղտնի փաստաթղթեր», էջ 25:

²³ Է. Ջոհրաբյան, նշվ. աշխ., էջ 181:

²⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 198, թ. 319:

²⁵ Նույն տեղում, գ. 299, մաս 2, թ. 105:

²⁶ Տե՛ս Է. Ջոհրաբյան, նշվ. աշխ., էջ 181:

²⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 299, մաս 2, թ. 159:

²⁸ Նույն տեղում, թ. 169:

²⁹ Տե՛ս նույն տեղը:

«Հիվանդ եմ և պիտի բուժվեմ: Մոտ օրերս դուրս է գալիս (Բարսիլից - Յու. Ղ.) ժամանակա-
վոր տեղակալը: Խնդրում եմ ասեկոսեներին չհավատար»⁹⁰: Երևանից վտարվելուց հետո,
որպես հատուցում իր «մատուցած ծառայությունների», Խան-Թեքինսկին նշանակվեց
Ալլրբեջանի արտաքին գործերի նախարարի օգնական:

**Ю. В. ГУЛЯН - Антиармянская деятельность дипломатического представ-
вителя Азербайджана Хан-Текинского в Республике Армения (март-август
1919г.).** - Дипломатические взаимоотношения между РА и Азербайджаном установи-
лись в марте 1919 года, когда свою деятельность начали соответствующие диплома-
тические представительства. На деятельность азербайджанского представительства в
Ереване и, в частности, Хан-Текинского проливают свет те секретные телеграммы,
которые он и сменившие его дипломаты посылали правительству Азербайджана. По
сути деятельность Хан-Текинского - это шпионаж. Он собирал разведывательные
данные о военной силе, передвижениях армии, о финансах. Тем самым он подска-
зывал своему правительству, каким способом нанести ущерб Республике Армения. В
вопросе высылки Текинского из Армении правительство получило поддержку англий-
ского командования, по приказу которого он и был удален из Еревана.

⁹⁰ Նույն տեղում, ք. 161: